ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 15

11 փետրվարի 2013 թվական

«ԱՆԻԻ ՁՄԵՌ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՐՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 17 կետի դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1) 2013 թվականի փետրվարի 16-ին «Անիի ձմեռ» ավանդական մարզամշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

Հանձնաժողովի նախագահ - Գ. Գրիգորյան – գլխավոր մասնագետ

անդամներ- Ս. Սարոյան – մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Է. Բրուտյան – հանրապետական մարզադպրոցի տնօրեն

Կ. Հովհաննիսյան – թիվ 1 դպրոցի տնօրեն

Ս. Սարդարյան – արհեստագործ. ուսումնարանի տնօրեն

Ռ. Գևորգյան – թիվ 2 դպրոցի տնօրեն

2) Քաղաքապետարանի գլխավոր մասնագետ՝ հաշվապահ Ա.Սաղաթելյանին միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար հատկացնել 300000 (երեք հարյուր հազար) դրամ 2013 թվականի բյուջեի վարչական մասի 08.1.1.51 դասակարգման (հանգստի և սպորտի ծառայություններ) 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:

3) Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16

11 փետրվարի 2013թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԼՅՈՎԱ ՄՈՎՍԵՍԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 25-ի N 2387-Ն որոշմամբ՝ Մարալիկ քաղաքի բնակիչ Լյովա Մովսեսի Սահակյանի անհատական բնակելի առանձնատունը հասցեավորելու նպատակով ***որոշում եմ***

Մարալիկ քաղաքի բնակիչ Լյովա Մովսեսի Սահակյանի անհատական բնակելի առանձնատունը հասցեավորել ք. Մարալիկ Նոր թաղամաս 9-րդ փողոց տուն 37:

Քաղաքապետ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 __ թ. _____ ____
ք.Մարալիկ